

ԱՎԵՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԻՐԱՅԻՆ ՈՏԱՆԱՎՈՐ

Եվ սկզբից հեռու
Եվ հանդիպման բոլոր վայրերից հեռու
Յեռու մեր մանկությունից ու սիրած
պաղպաղակից
Եվ մանկական թռչաբորբից հեռու
Իմ շինծու անտարբերությունից
Քո փառասեր նկրտումներից
Ու մյուսների քաղքենի անկեղծությունից հեռու
Յեռու Ազգային ժողովից
Ու քրեական հանցաշխարհից մեծ
Եվ դարաբաղյան կամավորականներից հեռու
Եվ պատգամավոր մայրիկներից հեռու
Եվ արվամոլ քեռիներից հեռու
Եվ Ձեյթունի այս խաչմերուկից հեռու
Եվ ընդհանրապես այս թղթից կետից էլ անդին
Ազգային հեռուստատեսության եթերից էլ
անկախ
Եվ բոլոր տեսակի բոզի տղերքի բանակին էլ
ոչ թե ընդդեմ այլ անտարբեր հեռու
Ու ինձ համար ինչքան էլ դժվար
Ինձնից իմ մանկությունից մարմնից
Յոգևոր և էրոզեն կետերից էլ
անդարձ հեռու...

ԻՆՔՆԱՐԱՍՏԱՏՄԱՆ ՓՈՐՁ

Ես անցա հյուրասենյակներով,
խոհանոցներով,
բայց այդ ամենը քիչ էր,
ու մտա ննջարանները,
և այդ անկողիններում սավանները քրտնեցին
իմ տենդոտ օրագծերից,
ձեր թույլտվությամբ ես արդեն պոետ էի,
և բավական էր,
և արդեն կարող էի սիրո, բնության ու
հայրենիքի մասին
ոտանավորներ գրել ու շարան-շարան
հնչեցնել հարթակներից,
և պանթոնում էլ մի բաժին հողակտորով
ապահովագրված կլիների,
բայց նախընտրեցի լողարաններում ավարտել
իմ տխուր կարիերան,

բայց քանի որ էլի ինչ-որ բան այնպես չէր,
ես դուրս նետեցի մարմինս.
ես տեղատարափ անձրևի մարդն եմ.
և ինչ օդ է՝ ազատ ու թեթև,
և ոտքերս, կեցցեն, պինդ են դեռ.
կուզեմ՝ քայլեմ, կուզեմ՝ կդռփեմ
ջրափոսերում,
և ինչ քամի է իսկը պարահանդեսում
ճիշտ գտնված զուգընկեր,
և ո՛նց ենք քրքրում աղբամաններ,
և ի՛նչ աղբամաններ՝ իսկը պոեզիա...

Եվ ցտեսություն:

Կհանդիպենք պանթեոնում: